ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ <<Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի <<Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում>> մասնագիտության մասնագիտական մոդուլները /258 ժամ ծանրաբեռնվածությամբ/ դասավանդող դասախոսի թափուր աշխատատեղի համար:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Դիմում /Ձև 1/,
2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/, /բնօրինակը և պատճենը/,
3. անձնագիր /բնօրինակը և պատճենը/,
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք /առկայության դեպքում/,
5. ինքնակենսագրություն /Ձև 4/,
6. մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,
7. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանգրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ /բնօրինակը և պատճենը/,
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրվանից՝ 21.01.2025թ. մինչև 04.02.2025թ., ամեն աշխատանքային օր՝ ժամը 9.00-ից մինչև 17.00-ը:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 11.02.2025թ.՝ ժամը 14.00-ին, Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջում:

Տեղեկությունների համար զանգահարել /0281/ 2-37-50, 2-10-37, 2-53-75 հեռախոսահամարներով: